

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

31.08. 2021թ.

ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, Պ. Ասլիբեկյանը, ֆակուլտետի ՈԻԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈԻԽ-ի նախագահ Ա. Եսայանը, Հ. Մարգարյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահին է Գ. Ավետիսյան, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. Հաղորդում առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման, նախապատրաստական աշխատանքերի մասին/ Ձեկ. Գ. Ավետիսյան/:
2. Դեկանատի կազմի քննարկում և հաստատում /Ձեկ. Գ. Ավետիսյան/:
3. 2021-2022 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկում և հաստատում /Ձեկ. Գ. Ավետիսյան/:
4. Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում /Ձեկ. Գ. Ավետիսյան/:

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 1/1

→ Հաստատել նիստի օրակարգը:

1. Լսեցին.- Հաղորդում առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման, նախապատրաստական աշխատանքերի մասին/ Ձեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ առաջին կիսամյակի ուսումնական գործընթացների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները իրականացված են: Նա նշեց, որ դասապրոցները իրականացվելու է առկա եղանակով՝ պահպանելով համավարակից պաշտպանվելու համար սահմանված պահանջները: Կազմվել են դասացուցակները՝ ըստ առաջին կիսամյակում դասավանդվող դասընթացների, քննարկվել այլ ֆակուլտետների դեկանների հետ՝ զուգադիպումներից խուսափելու համար: Դասացուցակները տեղադրվել են մանաձյուղի կայքում, ուղարկվել դասախոսներին և ուսանողներին: Կազմվել են 2020-21 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի առաջին լուծարքային շրջանի ժամանակացույցերը:

Արտահայտվեցին.- Գ. Հոնհաննիսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեց.- Առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման, նախապատրաստական աշխատանքերի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Լսեցին.- Դեկանատի կազմի քննարկում և հաստատում /Ձեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց դեկանատի կազմը և առաջարկեց քննարկել և հաստատել:

- | | |
|--------------------|---|
| 1. Գ. Ավետիսյան | դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ |
| 2. Ա. Ալեքսանյան | «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի ասիստենտ, խորհրդի քարտուղար |
| 3. Մ. Միքայելյան | «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ |
| 4. Գ. Հովհաննիսյան | «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչ |
| 5. Պ. Ասիլբեկյան | ֆակուլտետի արհրյուրոյի նախագահ |
| 6. Ա. Եսայան | ֆակուլտետի ՈԻԽ-ի նախագահ |
| 7. Ի. Վարդանյան | ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահ |

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Միաձայն կողմ քվեարկելով՝ գիտախորհրդի կազմը հավանության արժանացրեց և հաստատեց դեկանատի կազմը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.18 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. – Հաստատել ֆակուլտետի գիտախորհրդի նախագահի կողմից ներկայացված դեկանատի կազմը:

3. Լսեցին.- 2021-2022 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկման և հաստատման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը նշեց, որ մանդատային հանձնաժողովը ձևավորվել է հիմք ընդունելով «ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգի /10 կետ/ պահանջները: Նա ներկայացրեց 2021-2022 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմը.

- | | |
|------------------|---|
| 1. Գ. Ավետիսյան | դեկան, մանդատային հանձնաժողովի նախագահ, |
| 2. Պ. Ասիլբեկյան | ֆակուլտետի արհմիության նախագահ, |
| | մանդատային հանձնաժողովի քարտուղար, |
| 3. Ա. Սարիբեկյան | Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի |
| | ասիստենտ, Ֆինանսներ ԿԾ ղեկավար |
| 4. Ա. Եսայան | ֆակուլտետի ՈԽ նախագահ |
| 5. Ի. Վարդանյան | ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահ |

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.18 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանություն տալ 2021-2022 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի ներկայացված մանդատային հանձնաժողովի կազմին և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

4. Լսեցին – 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի մասնաճյուղային անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկման մասին /Զեկ Գ. Ավետիսյան/:

Դեկանը ներկայացրեց մասնաճյուղում գործող անվանական կրթաթոշակների հատկացման կարգն ու պայմանները: Այն տրվում է առավել աչքի ընկած, գերազանց առաջադիմություն և բարձր հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողին, որպես ֆինանսական խրախուսանք: Ըստ մասնաճյուղում գործող կարգի՝ անվանական կրթաթոշակի հավակնորդին առաջադրված պահանջները բավարարում են մի քանի ուսանողներ: Գ. Ավետիսյանը առաջարկեց «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի ներկայացնել ֆակուլտետի «Ֆինանսներ» մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Արաքսյա Հրանտի Բաղդասարյանի/ չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն/, «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի ներկայացնել «Ֆինանսներ» մասնագիտության III կուրսի ուսանողուհի Մանե Վահանի Փիրումյանի/ չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն/, «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի ներկայացնել «Զբոսաշրջություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Իննա Արծրունի Ենգիբարյանի /վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն/, «Սահակ Ձորափորեցի» անվանական կրթաթոշակի ներկայացնել «Զբոսաշրջություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Լատրա Խաժակի Ուլիխանյանի /վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն/, «Շավարշ Սարգսյան» անվանական կրթաթոշակի ներկայացնել «Ֆինանսներ» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Իրա Հրայրի Վարդանյանի/ չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն/ թեկնածությունները:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը:

Միաձայն կողմ քվեարկելով՝ գիտախորհրդի կազմը հավանության արժանացրեց 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացողների կազմը և երաշխավորեց ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 34 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին - Հավանության արժանացնել 2021- 2022 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդներ թեկնածությունները և ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

*Գիտական խորհրդի նախագահ՝
Քարտուղար՝*

*Գ. Ավետիսյան
Ա. Ալեքսանյան*